

Միջազգային համագործակցություն

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) համագործակցում է մարզային և համայնքային նշանակության նպատակային ծրագրեր իրականացնող մի շարք միջազգային կազմակերպությունների, խորհուրդների և միջազգային ֆինանսական կառույցների հետ՝ Միավորված ազգերի զարգացման ծրագիր (UNDP), ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ (UNICEF), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն (USAID), Միավորված ազգերի արդյունաբերության զարգացման կազմակերպություն (UNIDO), Շվեյցարիայի Զարգացման և համագործակցության գրասենյակ (SDC), Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (OSCE), Համաշխարհային բանկ (WB), Ասիական զարգացման բանկ (ADB), Գերմանիայի զարգացման և վերակառուցման բանկ (KfW), Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (UNHCR), Գերմանիայի միջազգային համագործակցության գրասենյակ (GIZ), Վորլդ Վիզիոն (World Vision), Բրիտանական խորհուրդ (British Council), Ճապոնիայի միջազգային զարգացման գրասենյակ (JICA) և այլն.

- միջազգային համագործակցության ոլորտում Նախարարության կողմից իրականացվող աշխատանքներում հատուկ կարևորություն է տրվում միջազգային փորձի ուսումնասիրմանը տարածքային զարգացման, տեղական ինքնակառավարման, ապակենտրոնացման, տեղական ժողովրդավարության, համայնքային ծառայության և այլ բնագավառներում:
- Նախարարությունը համագործակցության վերաբերյալ փոխընթերցման հուշագրեր է ստորագրել Ռուսաստանի Դաշնության և Լեհաստանի Հանրապետության տարածքային զարգացման նախարարությունների հետ:
- Նախարարությունը համագործակցություն է իրականացնում ԵՄ Արևելյան գործընկերության ներքո ստեղծված Տարածքային զարգացման փորձնական ծրագրերի (PRDP) շրջանակներում:
- Նախարարությունը ներկայացված է ԵԽ տեղական և տարածքային ժողովրդավարության կոմիտեում, ԱՊՀ մասնակից պետությունների միջտարածաշրջանային և մերձսահմանային համագործակցության խորհրդում:
- Նախարարության կողմից համակարգվում են Տնտեսական և տեխնիկական համագործակցության հայ-քուվեյթյան, Հայ-էմիրաթական, Հայ-կատարական, Հայ-իրաքյան և Հայ-եգիպտական, միջկառավարական հանձնաժողովները: